ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Ամերիկացի գիտնական Բարրի Քոմմոները նկարագրել է չորս էկոլոգիական սկզբունքներ, որոնք ներկայումս կոչվում են էկոլոգիայի օրենքներ: Դրանցում արտահայտված են իր նախորդների գիտական ուսումնասիրությունների միջոցով ստացված եզրահանգումները և դինամիկ հավասարակշռության սկզբունքը:

Առաջին օրենքը փաստում է. ***«Ամեն ինչ կապված է մնացած ամեն ինչի հետ»****: Այս օրենքով գիտնականը զարգացնում է այն գաղափարը, որ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչները փոխկապակցված են և եթե վնասվում է դրանցից որևէ մեկը, դա անխուսափելիորեն ազդում է մյուսների կենսակերպի վրա: Ցանկացած ազդեցություն, անկախ ընդգրկման ծավալից, ենթադրում է հետևանքներ, հիմնականում՝ բացասական:*

Երկրորդ օրենքը նշում է՝ ***«Ամեն ինչ պետք է ինչ-որ տեղ գնա»****: Այս օրենքի դրույթը բխում է նյութի պահպանման հիմնարար օրենքից: Բնությունը սինթեզում է միայն այնպիսի նյութեր, որոնք հետագայում կարող են բնական ճանապարհով քայքայվել: Առաջին օրենքի համաձայն՝ բոլոր մարդածին աղտոտումները ի վերջո կվերադառնան մարդկանց, այսինքն՝ վերանայել արդյունաբերական թափոնների խնդիրը: Մարդկության կողմից նոր նյութերի սինթեզը, որոնք չեն կարող քայքայվել կամ յուրացվել առանց շրջակա միջավայրին վնաս հասցնելու, հանգեցնելու են դրանց կուտակմանն այնտեղ, որտեղ դրանք չպետք է լինեն: Նույնը վերաբերում է նաև կենսածին վառելիքի արդյունահանմանը: Երկրորդ օրենքը հիմնված է թափոնների վերաբաշխման, թափոնազերծ և էկոլոգիապես մաքուր արտադրության սկզբունքի վրա: Նոր տեխնոլոգիաներ մշակելիս մարդկությունը պարտավոր է ապահովել Երկրի պաշարների խնայողաբար օգտագործումն ու առաջացող թափոնների վերամշակման հնարավորությունը կամ հեռացման ամենանորը մեթոդները:*

Երրորդ օրենքը՝ ***«Բնությունը բոլորից լավ գիտի»*** *հիմնված է էվոլյուցիայի տեսության վրա: Ժամանակակից աշխարհում գոյություն ունեցող օրգանիզմներն ու համակցությունները էվոլյուցիայի և բնական ընտրության*

երկարատև գործընթացի, տեսակների գոյատևման մրցակցային պայքարի արդյունք են: Բնությունը պահպանել է միայն կլիմայական որոշակի պայմաններին հարմարված, դիմացկուն և ամենաուժեղ օրգանիզմները, որոնք պարունակում են քայքայող ֆերմենտներ:

Մարդու կողմից էկոլոգիական միջավայրի ակտիվ վերափոխումը (էկոսպանություն), բույսերի ու կենդանիների ոչնչացումը (ցեղասպանություն) կարող են հանգեցնել անդառնալի հետևանքների, որոնց արդյունքում աշխարհը այլևս պիտանի չի լինի հենց մարդկային գոյության համար: Առանց էկոհամակարգերի և դրանցում ընթացող գործընթացների ու հնարավոր հետևանքների ճշգրիտ ուսումնասիրման՝ բնության մեջ փոփոխություններ կատարել չի կարելի, մարդկային անխոհեմ միջամտությունը կարող է հանգեցնել ավելի մեծ ու անդառնալի վնասների:

Չորրորդ՝ ***«Ոչինչ անվճար չի տրվում»*** *օրենքը հիմնված է բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման վրա և համատեղում է նախորդ երեքը: Կենսոլորտը, որպես համապարփակ էկոհամակարգ, միասնական ամբողջություն է: Մեկ ոլորտում թվացյալ հաղթանակը ուղեկցվում է մեկ այլ ոլորտում պարտությամբ:*

Շրջակա միջավայրի պահպանման ու պաշտպանության վրա խնայողությունները հանգեցնում են միջավայրի և նրա բնակիչների առողջության վատթարացմանը, ծագում են բնական աղետներ և բարենպաստ կենսապայմանները աստիճանաբար անկում են ապրում: Մարդկային աշխատանքի միջոցով դրանից ստացված ամեն ինչ, ի վերջո, պետք է փոխհատուցվի:

Իր օրենքներում Բարրի Քոմմոները ընդգծում է բնական գործընթացների համընդհանուր փոխկապակցվածությունը: Ցանկացած բնական համակարգի առաջընթացը հնարավոր է միայն իր միջավայրի նյութական, էներգետիկ և տեղեկատվական ռեսուրսների բացահայտման ու խելամիտ օգտագործման միջոցով: